# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի ավագանու՝ 2021 թվականի մայիսի 20-ի նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝ (կողմ-10) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Ասատրյան Արամ
Գրիգորյան Կարեն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Գ.Աբրահամյան

# ՕՐԱԿԱՐԳ

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.05.2021 Թ ՆԻՍՏԻ

1. Ապարան համայնքի 2021 թ բյուջեի ֆոնդային և վարչական մասերում ավելացումներ և պակասեցումներ կատարելու և Ապարան համայնքի ավագանու 23.12.2020 թ N 98-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/զեկ.Մ. Նիկողոսյան/

2. Ապարան համայնքի 2021 թ ՏԱՊ ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

/ զեկ.Գ. Աբրահամյան/

3. Ապարան համայնքի ղեկավարի սոցիալական պաշտպանության բնագավառում կամավոր /սեփական/ լիազորությունների իրականացման կարգում լրացում կատարելու մասին:

/ զեկ.Գ. Աբրահամյան/

4. Ապարան համայնքի ղեկավարին կից գործող Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին

/ զեկ.Ա. Կարապետյան/

5. Հայրենական Մեծ պատերազմի վետերան Անդրանիկ Ներսեսի Գևորգյանին Ապարան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին

/ զեկ.Հ. Մկրտչյան/

6. Ապարան համայնքում իրականացվող ծրագրերի նախաձեռնող խումբ ստեղծելու մասին

/ զեկ.Հ. Մկրտչյան/

7. ՀՀ խոշորացված համայնքների համար հայտարարված՝ համավարակի (COVID 19-Ի) հետևանքները մեղմելուն ուղղված դրամաշնորհային ծրագրերի մրցույթին մասնակցելու համար համայնքապետարանի կողմից ընտրված հայտին համաձայնություն տալու մասին

/ զեկ.Հ. Մկրտչյան/

8. Արագածի լեռնագոգային բնակավայրերի զարգացումը՝ օրգանական գյուղատնտեսության և տուրիզմի կլաստերների զարգացման, նոր ու որակյալ ծառայությունների մատուցման միջոցով ծրագրին համաձայնություն տալու մասին:

/զեկ.Հ. Մկրտչյան/

9. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

/զեկ.Վ. Սուքիասյան/

10. Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին

/զեկ.Վ. Սուքիասյան/

11. Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղում էլեկտրական ենթակայան տեղադրելու նպատակով հողամաս հատկացնելու թույլտվություն տալու մասին

/զեկ.Վ. Սուքիասյան/

12. Ապարան համայնքի Վարդենիս գյուղի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացիների սեփական-ությունը հանդիսացող 0,3572 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/ զեկ.Վ. Սուքիասյան/

13. Ապարան համայնքի Երնջատափ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացիների սեփականությունը հանդիսացող 0,59275 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/ զեկ.Վ. Սուքիասյան/

14. Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացիների սեփականությունը հանդիսացող 0,8658 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/զեկ.Վ. Սուքիասյան/

15. Ապարան համայնքի ավագանու 20.01.2021 թ N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/զեկ.Վ. Սուքիասյան/

16. Ապարան համայնքի Ջրամբար գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0,0090 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

/զեկ.Վ. Սուքիասյան/

17. Ապարան համայնքի Սարալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 4,4576 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

/զեկ.Վ. Սուքիասյան/

18. Ապարան համայքի Չքնաղ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ անհայտ քաղաքացիների անվամբ հաշվառված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/զեկ.Վ. Սուքիասյան/

19. Ապարան համայնքի ավագանու 16.07.2020թ. թիվ 50-Ա և 19.03.2021թ. թիվ 29-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

/զեկ.Վ. Սուքիասյան/

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 20 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ն

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱԿԱՍԵՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020Թ. N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով սուբվենցիոն ծրագրերի չափաբաժինների փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարության 25.02.2021թ.N 292-Ն որոշումը, 2021թ. ՀՀ պետբյուջեով Արվեստի դպրոցներին ազգային նվագարանների գծով հատկացվող սուբվենցիաների գումարների պակասեցման հանգամանքը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի 2021թ. բյուջեի եկամուտների մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա) Ֆոնդային մասով եկամուտներն ավելացնել 50.000.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի.
բ) Վարչական մասով եկամուտները պակասեցնել 276.800 դրամով:
2. Ապարան համայնքի 2021թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա) Ֆոնդային մասով ծախսերն ավելացնել 50.000,0 հազ. դրամով.
բ) Վարչական մասով ծախսերը պակասեցնել 276.800 դրամով:
3. <<Ապարան համայնքի 2021թ. բյուջեն հաստատելու մասին>> Ապարան համայնքի ավագանու 23.12.2020 թվականի N 98-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերի աղյուսակներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3, 4 հավելվածների:

Ավագանի՝ (կողմ-10) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Ասատրյան Արամ
Գրիգորյան Կարեն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Գ.Աբրահամյան

ՀԱՎԵԼՎԱԾ

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

| N | Բնակավայրիանվանում | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄ /Հազ.դրամ | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄ /Հազ. դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ /ՀՀ դրամ/ |
| 1 | Ապարան | 12.000,0 | Աղբահավաք ավտոմեքենա | 1.000,0 | 17.000,0 |
| | | | S 170 բուլդոզեր | 4.000,0 | |
| 2 | Արագած | 7.000,0 | | | 2.000,0 |
| 3 | Երնջատափ | 2.000,0 | | 500,0 | 2.000,0 |
| 4 | Եղիպատրուշ | 1.000,0 | | | 1.000,0 |
| 5 | Վարդենուտ | 7.000,0 | | | 7.000,0 |
| 6 | Վարդենիս | 7.000,0 | | | 7.000,0 |
| 7 | Լուսագյուղ | 500,0 | | | 500,0 |
| 8 | Շենավան | 1.500,0 | | | 1.500,0 |
| 9 | Սարալանջ | 500,0 | Նախկին գրադարանի քանդված շենք | 500,0 | 1.000,0 |
| 10 | Քուչակ | 1.000,0 | | | 1.000,0 |
| 11 | Շողակն | 2.500,0 | | | 2.500,0 |
| 12 | Չքնաղ | 1.500,0 | | | 1.500,0 |
| 13 | Ջրամբար | 500,0 | | | 500,0 |
| | | 44.000,0 | | 6.000,0 | 50.000,0 |

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ　　　　　　Ա.Կարապետյան

*Հավելված N1*

# «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020Թ. N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ N1 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | -276.8 | -276.8 | 0 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | -276.8 | -276.8 | 0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝ | 7331 | -276.8 | -276.8 | x |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | -276.8 | -276.8 | x |

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Կարապետյան

*Հավելված 2*

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020Թ. N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | -276.8 | -276.8 | 0 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝ | -276.8 | -276.8 | |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝ | -276.8 | -276.8 | |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | -276.8 | -276.8 | |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | 0 | 0 | 0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | +50000.0 | 0 | +50000.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | +50000.0 | 0 | +50000.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | -50000.0 | 0.0 | -50000.0 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -50000.0 | 0.0 | -50000.0 |

**Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Կարապետյան**

*Հավելված 3*

**«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**
**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020Թ N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ**
**N3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | x | -276.8 | -276.8 | 0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝ | x | -276.8 | -276.8 | 0 |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝ | x | -276.8 | -276.8 | 0 |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝ | x | -276.8 | -276.8 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | -276.8 | -276.8 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝ | x | 0 | 0 | 0 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | +50000.0 | 0 | +50000.0 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝ | x | +50000.0 | 0 | +50000.0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | +50000.0 | 0 | +50000.0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6100 + տող 6200 + տող 6300 + տող 6400), այդ թվում՝ | x | -50000.0 | x | -50000.0 |
| 6100 | ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6110 + տող 6120 + տող 6130), այդ թվում՝ | x | -6000.0 | x | -6000.0 |
| 6110 | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8111 | -6000.0 | x | -6000.0 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ(տող 6410 + տող 6420 + տող 6430 + տող 6440), այդ թվում՝ | x | -44000.0 | x | -44000.0 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | -44000.0 | x | -44000.0 |

**Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝** **Ա. Կարապետյան**

*Հավելված 4*

**«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020Թ N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ N6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)** | | -276.8 | -276.8 | 0 |
| 2100 | 1 | 0 | 0 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝** | | -276.8 | -276.8 | 0 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | -276.8 | -276.8 | 0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | -276.8 | -276.8 | 0 |
| 2400 | 4 | 0 | 0 | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝** | | 0 | 0 | 0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | | +50000.0 | 0 | +50000.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | +50000.0 | 0 | +50000.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | +50000.0 | 0 | +50000.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | | -50000.0 | 0.0 | -50000.0 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | -50000.0 | 0.0 | -50000.0 |

**Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Կարապետյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**

**Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 38-Ա**

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ/ՏԱՊ/ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 82-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով սուբվենցիոն ծրագրերի չափաբաժինների փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարության 25.02.2021թ.N 292-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.,,Ապարան համայնքի 2021թ տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ հաստատելու մասին,,համայնքի ավագանու 23.12.2021 թվականի N 99-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝ (կողմ-10) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Ասատրյան Արամ
Գրիգորյան Կարեն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Գ.Աբրահամյան

Հավելված

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ /ՏԱՊ/

| N | ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Բնակավայր | Ծավալ, Քանակ | Ծրագրի արժեքը Հազ.դրամ | Այդ թվում / Հազար դրամ/ ՀՀ պետբյուջե | Դոնոր կազմակ | Համայնքի բյուջե Վարչական | Համայնքի բյուջե Ֆոնդային |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՈԼՈՐՏ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | |
| 3 | Վարչական ղեկավարների նստավայրերի նորոգում | Կայք, Վարդենիս Թթու Ջրագլուխ | 300 քմ | 4.000,0 | 0 | 0 | 4.000,0 | 0 |
| 13 | Իրավաբանական և փաստաբանական ծառայության ձեռք բերում | Ապարան համայնք | 2021 թ | 5.000,0 | 0 | 0 | 5.000,0 | 0 |
| ՈԼՈՐՏ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | |
| 1 | ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ՝ Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում | 14 բնակավայր | 31000 քմ | 340.000,0 | 153.000,0 45 % | 0 | 0 | 187.000,0 55 % |
| 2 | ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ՝ Բաղրամյան 12 և 14 բ/շ պուրակների կառուցապատում | Ապարան | 800 քմ | 28.000,0 | 12.600,0 45% | x | x | 15.400,0 55 % |
| 6 | Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում՝ Բետոնյա ուղիղ կտրվածքի տաշտակներով՝ 30x40 սմ | Հարթավան | 300 գծմ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6.1 | Խաղասենյակի վերանորոգում, սանհանգույցի կառուցում | Հարթավան | | 1.200,0 | 0 | 0 | 0 | 1.200,0 |
| 6.2 | Մշակույթի տան շենքում սանհանգույցի կառուցում | Հարթավան | | 1.100,0 | 0 | 0 | 0 | 1.100,0 |
| 9 | Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում՝ Բետոնյա ուղիղ կտրվածքի տաշտակներով՝ 30x40 սմ | Քուչակ | 300 գծմ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9.1 | Զոհվածների պանթեոնի կառուցապատում | Քուչակ | | 3.000,0 | 0 | 0 | 0 | 3.000,0 |
| 9.2 | Մանկապարտեզի շենքի դրենաժի կառուցում | Քուչակ | | 1.500,0 | 0 | 0 | 0 | 1.500,0 |
| ՈԼՈՐՏ 6 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | |
| 1 | Զոհվածների պանթեոնի կառուցապատում | Ապարան | | 15.000,0 | 0 | 0 | 0 | 15.000,0 |
| 4 | Բաղրամյան փողոցի գիշերային լուսավորության կառուց | Ապարան | | 4.500,0 | 0 | 0 | 0 | 4.500,0 |
| ՈԼՈՐՏ 9. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | |
| 1 | Մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի կառուց | Արագած | 600 քմ | 4.500,0 | 0 | 0 | 0 | 4.500,0 |

Ծանոթություն. 20.05.2021 թ պլանավորված և համավարակի և պատերազմի արդյունքում չեղարկված միջոցառումների ծախսեր հանվել են:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ա.Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  N 39-Ա**

## ,,ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ /ՍԵՓԱԿԱՆ/ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. ,,Ապարան համայնքի ղեկավարի սոցիալական պաշտպանության բնագավառում կամավոր (սեփական) լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին,, համայնքի ավագանու 23.01.2018թ. N 57-Ա որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

7) Բացառիկ դեպքերում՝ սոցիալապես խիստ անապահով վիճակում գտնվող զոհվածի ընտանիքին, տարերային աղետից տուժած ընտանիքին, խիստ անապահով վիճակում գտնվող ընտանիքի անդամի կյանքին սպառնացող վտանգի պարագայում՝ շտապ վիրահատության, դեպքերում համայնքի ղեկավարի կարգադրությամբ հատկացվում է օգնություն՝ մինչև 300.000 դրամի չափով:

Ավագանի՝ (կողմ-10) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Ասատրյան Արամ
Գրիգորյան Կարեն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Գ.Աբրահամյան